”ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ”

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013թ.

BAKER TILLY
ARMENIA

ԵՐԵՎԱՆ 2014

BAKER TILLY ARMENIA

Բովանդակություն

1.	Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	3
2.	Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	4
3.	Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	5
4.	Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	6
5.	Համախմբված Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	7

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

ԱԿՏԻՎՆԵՐ	*Ծանոթագրություն*	2013թ.	2012թ.
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	147,244	154,391
Ոչ նյութական ակտիվներ	5	737	791
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		147,981	155,182
Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	6	9,370	5,487
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	13,749	33,165
Այլ ընթացիկ ակտիվներ		1,099	225
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		24,918	38,877
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		172,199	194,059
ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ	8	1,065	1,000
Կուտակված շահույթ		97,105	139,602
Պահուստային կապիտալ		150	150
Ընդամենը սեփական կապիտալ		98,320	140.752
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ բանկային վարկեր	9	26,367	22,197
Այլ ընթացիկ պարտավորություններ	10	47,512	31,110
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		73,879	53.307
ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		172,199	194,059

Գևորգյան Փառանձեմ
Գլխավոր տնօրեն

Գրիգորյան Լուսինե
Գլխավոր հաշվապահ

Վավերացման ամսաթիվ՝ 10.03.2014թ.

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	2013թ.	2012թ.
Իրացումից հասույթ		207,118	203,540
Ծառայությունների ինքնարժեք		(148,601)	(135,504)
Համախառն շահույթ		58,517	68,036
Գործառնական այլ եկամուտներ	11	30	56
Իրացման ծախսեր	12	(526)	(18,884)
Վարչական ծախսեր	13	(62,356)	(23,062)
Գործառնական այլ ծախսեր	14	(554)	(1,929)
Գործառնական շահույթ (վնաս)		(4,889)	24,217
Ֆինանսական ծախսեր	15	(2,344)	(333)
Շահույթ մինչև հարկումը		(7,233)	23,884
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)		-	(3,249)
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո		(7,233)	20,635
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	124,035
Համապարփակ ֆինանսական արդյունք		(7,233))	144,670

Գևորգյան Փառանձեմ
Գլխավոր տնօրեն

Գրիգորյան Լուսինե
Գլխավոր հաշվապահ

Վավերացման ամսաթիվ՝ 10.03.2014թ.

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Պահուստ	Ընդամենը
Հոդվածներ				
Մնացորդ առ 31 **դեկտեմբերի** 2012թ.	1,000	139,602	150	140,752
Նախորդ տարիների էական սխալների ճշգրտում	-	(3,264)	-	(3,264)
Վերահաշվարկված մնացորդ	1,000	136,338	150	137,488
Դուստր ընկերության կանոնադրական կապիտալ	65	-	-	65
Զուտ շահույթ/ վնաս	-	(7,233)	-	(7,233)
Վճարված ծահաբաժին	-	(32,000)	-	(32,000)
Մնացորդ առ 31 **դեկտեմբերի** 2013թ.	1,065	97,105	150	98,320

Գևորգյան Փառանձեմ
Գլխավոր տնօրեն

Գրիգորյան Լուսինե
Գլխավոր հաշվապահ

Վավերացման ամսաթիվ՝ 10.03.2014թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2013թ.	2012թ.
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	33,165	25,267
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ծառայությունների իրացումից	217,020	216,734
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր	3,605	7,554
Նյութերի ձեռքբերման գծով	(2,364)	(3,300)
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	(9,880)	(16,207)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(155,327)	(114,031)
Վճարումներ բյուջե	(33,096)	(25,378)
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	(542)	(8,901)
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	(8,112)	(1,629)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	11,304	54,842
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահաբաժինների և տոկոսների ստացումից	2	-
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով	(2,310)	(24,185)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(2,308)	(24,185)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկերից և փոխառություններից	42,796	30,733
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	(39,024)	(29,306)
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	(33,563)	(24,333)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(29,791)	(22,906)
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	(20,795)	7,751
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	78	147
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	12,448	33,165

Գևորգյան Փառանձեմ
Գլխավոր տնօրեն

Գրիգորյան Լուսինե
Գլխավոր հաշվապահ

Վավերացման ամսաթիվ՝ 10.03.2014թ.

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

՛՛ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ՛՛ փակ բաժնետիրական ընկերությունը (հետայսու՝ Ընկերություն) (նախկինում՝ ՛՛Բիզնես Կոնսալտ՛՛ ՓԲԸ) մասնագիտական ծառայություններ մատուցող անկախ Ընկերություն է, որը հիմնադրվել է 1996թ: 1998թ.-ից ք.Գյումրիում գործում է Ընկերության հիմնադրած մասնաճյուղը:
Սկսած 2007թ. մայիս ամսից, մեր Ընկերությունն անդամակցում է Baker Tilly International համաշխարհային ճանաչում ունեցող աուդիտորական խորհրդատվական ընկերությանը՝ ստանալով միջազգային կարգավիճակ:

՛՛Բեյքեր Թիլլի Ինթերնեշնլ՛՛-ը (www.bakertillyinternational.com) հաշվապահական և գործարար ծառայությունների խոշորագույն միջազգային ցանցերի ցանկում ութերորդն է. այն ներկայացված է իր ավելի քան 156 անկախ ընկերությունների միջոցով աշխարհի 131 երկրներում, իսկ գլխամասային գրասենյակը տեղակայված է գործարար աշխարհի կենտրոն՝ Լոնդոնում (Միացյալ Թագավորություն):
Ընկերության բաժնետիրական կապիտալը հավասարապես պատկանում է Փառանձեմ Գևորգյանին և Մուշեղ Մկրտչյանին:
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ուներ 40 աշխատակից (2012թ-ին՝ 39):
Ընկերության գործունեության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Հանրապետության փ. 22, 5-րդ հարկ: Ընկերության մասնաճյուղի հասցեն է՝ ՀՀ Գյումրի, Խրիմյան Հայրիկ փ. 46ա:

Ընկերությունը աուդիտորական ծառայությունների մատուցման լիցենզիա է ստացել Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարությունից և ծառայություններ է մատուցում ձեռնարկատիրական և բանկային ոլորտի հաճախորդներին: Հայաստանյան և Հայաստանում գործող միջազգային կազմակերպություններին՝Ընկերությունը մատուցում է հետևյալ ծառայությունները.

- Աուդիտ
- Հաշվապահական հաշվառման վարում
- Հարկային և իրավաբանական խորհրդատվություն
- Խորհրդատվական ծառայություններ

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (՛՛ՖՀՄՍ՛՛) պահանջների համաձայն:

Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա բացառությամբ :

Գործառնական և ներկայացման արժույթ

Կազմակերպության գործառնական արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Կազմակերպության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Գնահատումների ու ենթադրությունների կիրառում

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային սկզբունքների, սովորաբար ղեկավարությունից այնպիսի գնահատումներ ու ենթադրություններ է պահանջում, որոնք ազդեցություն են գործում հաշվետվությունում ներկայացված ակտիվների ու պարտավորությունների գումարների և պայմանական ակտիվների ու պարտավորությունների բացահայտման վրա՝ ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների ու ծախսերի գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Գնահատումները կիրառվում են հաշվապահությունում կասկածելի պարտքերի պահուստի, պաշարների հնացման, հիմնական միջոցների ու ներդրումների փոխհատուցման, մաշվածության, եկամտի ճանաչման, հարկերի ու պայմանական հոդվածների համար: Գնահատումներն ու ենթադրությունները պարբերաբար ուսումնասիրվում են և արդյունքները արտացոլվում են այն տարվա ֆինանսական հաշվետվություններում, որում դա անհրաժեշտ է համարվում:

Գործունեության անընդհատությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվապահական հաշվառման սկզբունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացվել են հայկական դրամով՝ հազարների ճշտությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում են այլ նշումներ:

Հիմնական միջոցներ

Սկզբնական ճանաչման պահին հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով: Այլ կողմերից ձեռք բերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում:

Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, եթե հավանական է, որ Ընկերությունը կստանա այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտներ և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները առաջանալուն պես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Մաշվածություն

Հիմնական միջոցի միավորի մաշվեցվող (մաշվածության միջոցով որպես ծախս ճանաչման ենթակա) գումարը պարբերաբար բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Շենքեր, շինություններ	40 տարի
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	5 տարի
Այլ հիմնական միջոցներ	5 տարի
Մինչև 50,000 դրամ արժողության հիմնական միջոցներ	1 տարի

Հիմնական միջոցի մաշվածության գումարը իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Մաշվածության հաշվարկման գծային մեթոդի համաձայն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում կատարվում են հավասարաչափ հատկացումներ:

Վարձակալված ակտիվներ

Այն վարձակալությունը, որի դեպքում Ընկերությանն են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե ողջ ռիսկերն ու օգուտները, հանդիսանում է ֆինանսական վարձակալություն: Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերված ակտիվները չափվում են իրական արժեքից և նվազագույն վարձակալական վճարների ներկա արժեքից նվազագույնով: Սկզբնական ճանաչումից հետո ակտիվը հաշվառվում է տվյալ ակտիվի նկատմամբ կիրառելի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն:

Վարձակալության մյուս տեսակները հանդիսանում են գործառնական վարձակալություն, և այդ վարձակալության պայմաններով վարձակալված ակտիվները չեն ճանաչվում Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Արժեզրկում

Ֆինանսական ակտիվը, որը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե պարզվում է, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, որը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Դեբիտորական պարտքեր

Որպես դեբիտորական պարտք են դասակարգվել այն ֆինանսական ակտիվները, որոնք ստեղծվել են Ընկերության կողմից ուղղակիորեն պարտապանին (դեբիտորին) ապրանքներ կամ ծառայություններ տրամադրելու միջոցով, բացառությամբ այն դեբիտորական պարտքերի, որոնք Ընկերությունը մտադրված է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել: Սույն բաժնում նկարագրված մոտեցումները կիրառվում են նաև տրված կանխավճարների հաշվառման նկատմամբ:
Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում: Այս ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները:
Դեբիտորական պարտքը դուրս է գրվում հաշվեկշռից այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը կորցնում է վերահսկողությունը պայմանագրային իրավունքների նկատմամբ, որոնք կազմում են այդ ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը):

Կրեդիտորական պարտքեր և մասհանումներ

Որպես կրեդիտորական պարտք են դասակարգվում այն մարման ենթակա գումարները, որոնք ստեղծվում են Ընկերության կողմից ուղղակիորեն պարտատիրոջից (կրեդիտորից) ապրանքներ կամ

ծառայություններ գնելու միջոցով: Սույն բաժնում նկարագրված մոտեցումները կիրառվում են նաև ստացված կանխավճարների հաշվառման նկատմամբ:

Հարկեր

Հարկերը հաշվարկված են ՀՀ հարկային օրենսդրությանը համապատասխան:

Շահութահարկ

Շահութահարկը կազմված է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների կազմման համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների
սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում Ընկերության գործունեության միավորում և որն ազդեցություն չունի ոչ հաշվապահական և ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկի գումարը չափվում է կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս:

Ընթացիկ և հետաձգված հարկի գումարը որոշելիս Ընկերությունը հաշվի է առնում նաև լրացուցիչ հարկերի, տուգանքների, ուշացված վճարումների համար տոկոսների գանձման հնարավորությունը:

Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

Եկամուտների և ծախսերի ճանաչումը

Եկամուտները և ծախսերը հաշվառվում են հաշվեգրման եղանակով: Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն, և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից և ծախսը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Եկամուտը դա տարվա ընթացքում մատուցված մասնագիտական ծառայությունների գծով ստացվելիք հատուցման իրական արժեքն է, որը ներառում է հաճախորդների համար իրականացվող աշխատանքների ժամանակ կրած փոխհատուցվող ծախսերը, սակայն չի ներառում ավելացված արժեքի հարկը: Երբ գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա՝ պայմանով, որ հատուցում ստանալու իրավունքը ձեռք է բերվել ծառայությունների մատուցման արդյունքում: Հատուցումը հաշվեգրվում է պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարմանը զուգահեռ՝ հիմք ընդունելով փաստացի կատարած աշխատանքի արժեքը: Այդ իսկ պատճառով, ծառայությունների մատուցման պայմանագրերից ստացվող հասույթն իրենից ներկայացնում է յուրաքանչյուր պայմանագրով նախատեսված աշխատանքի ավարտվածության աստիճանին համապատասխանող ծախսերը, գումարած վերագրելի շահույթը և անհրաժեշտության դեպքում՝ հանած նախորդ տարիներում ճանաչված գումարները: Իսկ եթե

գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, ապա հասույթը ճանաչվում է ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերի չափով, որոնք փոխհատուցելի են: Հասույթ չի ճանաչվում, եթե առկա են զգալի անորոշություններ վճարման ենթակա հատուցման փոխհատուցման հետ կապված, կամ երբ վճարումը ստանալու իրավունքը պայմանավորված է Ընկերության վերահսկողությունից դուրս գտնվող դեպքերով: Ակնկալվող վնասը ճանաչվում է հավանական դառնալու պահին՝ հասույթի և ծախսերի վերջին գնահատումների հիման վրա:

Արտարժույթներ

Ընկերությունը վարում է իր հաշվապահական հաշվառման գրքերն ու մատյանները տեղական արժույթով՝ հայկական դրամով: Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են հայկական դրամով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամական ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ՀՀ դրամի՝ հաշվեկշռային ամսաթվի դրությամբ գործարքի օրվա փոխարժեքով: Առաջացած բոլոր տարբերությունները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:
Հայկական դրամով արտահայտված մնացորդների փոխարկման համար կիրառված փոխարժեքները, որոնք հրապարակվել են ՀՀ ԿԲ-ի կողմից ներկայացված են ստորև.

	31 Դեկտեմբեր 2013թ.	31 Դեկտեմբեր 2012թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	405.64	403.58
ՀՀ դրամ/1 ԵՎՐՈ	559.54	532.24

Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ և դրանց փոփոխություններն ու մեկնաբանությունները չէին գործում 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և հետևաբար չեն կիրառվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Չենք բացառում, որ դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության վրա, երբ կմտնեն կիրառության մեջ: Դրանք են՝

- ՖՀՄՍ 7 ՝՝Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ – Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում՝՝ ստանդարտի փոփոխությունները ներառում են բացահայտման նոր պահանջներ այն ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար, որոնք հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ պետք է կառավարեն հաշվանցման համաձայնությունները կամ նմանատիպ պայմանագրերը: Փոփոխությունները գործում է 2013թ. հունվարի 1-ից կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվեն հետադարձ հիմունքով:

- ՖՀՄՍ 9 ՝՝Ֆինանսական գործիքներ՝՝ ստանդարտը կգործի 2015թ. հունվարի 1-ից սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը կհրապարակվի մի քանի փուլերով, և կփոխարինի Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ ՀՀՄՍ 39 ՝՝Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում՝՝-ին:
  ՖՀՄՍ 9-ի առաջին մասը, որը հրապարակվել է 2009թ. նոյեմբերին վերաբերում է ֆինանսական ակտիվների ճանաչմանը և չափմանը, իսկ երկրորդ մասը՝ 2010թ. հոկտեմբերին և վերաբերում է ֆինանսական պարտավորությունների դասակարգմանը և չափմանը: Կարծում ենք, որ Ստանդարտի մյուս փոփոխությունները կհրապարակվեն 2014թ.-ի ընթացքում: Ընկերությունը որդեգրել է Ստանդարտների փոփոխություններին զուգընթաց կիրառում:

4. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

(հազար դրամ)

	Շենքեր	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական , տնտեսականգույք, գործիքներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք						
2012թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	124,035	2,477	16,200	20,612	597	163,921
Ավելացում	-	523	-	1,488	-	2,011
2013թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	124,035	3,000	16,200	22,100	597	165,932
Մաշվածք						
2012թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	1,118	540	7,680	192	9,530
Կուտակված ամորտիզացիա	3,101	776	3,240	1,987	182	9,286
Նվազեցում	-	-	-	(128)	-	(128)
2013թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,101	1,894	3,780	9,539	374	18,688
Զուտ հաշվեկշռային արժեք						
2012թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	124,035	1,359	15,660	12,932	405	154,391
2013թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	120,934	1,106	12,420	12,561	223	147,244

5. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

(հազար դրամ)

	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք		
2012թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,253	5,253
Ավելացում	130	130
2013թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,383	5,383
Մաշվածք		
2012թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,462	4,462
Կուտակված ամորտիզացիա	184	184
2013թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,646	4,646
Զուտ հաշվեկշռային արժեք		
2012թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	791	791
2013թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	737	737

6. ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ

(հազար դրամ)

	2013թ.	2012թ.
Դեբիտորական պարտքեր մատ. ծառ., կատ. աշխ. գծով	7,837	3,615
Տրված կանխավճ. աշխ., ծառ. ձեռք բերելու համար,	842	937
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	691	547
Այլ ընթացիկ դեբիտորական պարտքեր	-	388
Ընդամենը	9,370	5,487

7. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

Դրամական հոսքերի հաշվետությունում ներկայացված դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են հետևյալը.

(հազար դրամ)

	2013թ.	2012թ.
Կանխիկ դրամ	8,446	26,483
Անկանխիկ դրամական միջոցներ բանկերում	5,303	6,682
Ընդամենը	13,749	33,165

8. ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

(հազար դրամ)

	2013թ.	2012թ.
Կանոնադրական կապիտալ	1,065	1,000

9. ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ

(հազար դրամ)

	2013թ.	2012թ.
Կարճաժ.բանկային վարկերը ստացված են. ´´Ագրոլիզինգ´´ վարկային կազմակերպությունից	26,367	22,197
Ընդամենը	26,367	22,197

10. ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(հազար դրամ)

	2013թ.	2012թ.
Կրեդիտորական պարտքեր գնումների ծգով	18,241	12,526
Ստացված ընթացիկ կանխավճարներ	21,851	16,045
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	4,095	2,539
Այլ կրեդիտորական պարտքեր	3,325	-
Ընդամենը	47,512	31,110

11. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

(հազար դրամ)

	2013թ.	2012թ.
Գործառնական այլ եկամուտներ	30	56
Ընդամենը	30	56

12. ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

(հազար դրամ)

	2013թ.	2012թ.
Մարքեթինգի և գովազդի ծախսեր	(526)	(12,884)
Իրացման այլ ծախսեր	-	(6,000)
Ընդամենը	(526)	(18,884)

13. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

(հազար դրամ)

	2013թ.	2012թ.
Աշխատավարձ և սոց. վճարներ	(23,809)	(5,447)
Հիմնական միջոցների մաշվածության, վերանորոգման ծախսեր	(5,073)	(3,814)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	(16,934)	(3,554)
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	(3,219)	(2,818)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	(3,076)	(5,363)
Բանկային,ապահովագրության ծախսեր	(884)	(361)
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	(470)	(600)
Այլ	(8,891)	(1,105)
Ընդամենը	(62,356)	(23,062)

14. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

(հազար դրամ)

	2013թ.	2012թ.
Գործառնական այլ ծախսեր	(554)	(1,929)
Ընդամենը	(554)	(1,929)

15. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

(հազար դրամ)

	2013թ.	2012թ.
Վարկերի գծով տոկոսային ծախսեր	(2,344)	(333)
Ընդամենը	(2,344)	(333)

Գևորգյան Փառանձեմ
Գլխավոր տնօրեն

Գրիգորյան Լուսինե
Գլխավոր հաշվապահ

Վավերացման ամսաթիվ՝ 10.03.2014թ.